<<Կրթության բարելավում>> վարկային ծրագրի շրջանակներում ավագ դպրոցներում սովորողների հաճախումների վերաբերյալ հետազոտությունների իրականացման նպատակով կազմակերպության ընտրության մրցույթ

ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ-ը, <<Կրթության բարելավում>> ծրագրի շրջանակներում ավագ դպրոցներում սովորողների հաճախումների վերաբերյալ հետազոտությունների իրականացման նպատակով հայտարարում է խորհրդատվական կազմակերպության ընտրության մրցույթ:

Տվյալ խորհրդատվական ծառայությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

- Իրականացնել տվյալների հավաքագրում Հայաստանի ավագ դպրոցներում հաճախելիության ցուցանիշների վերաբերյալ՝ տարանջատված ըստ դասարանների և սեռի:
- Վերլուծել ավագ դպրոցներում ընդգրկվածության խնդիրները. որ մարզերի ավագ դպրոցներում է գրանցված ընդգրկվածության ամենացածր ցուցանիշը, որոնք են ավագ դպրոցներում ցածր ընդգրկվածության հիմնական պատճառներն ու խոչընդոտները, որոնք են իրավիճակը բարելավելու, ընդգրկվածությունը մեծացնելու հիմնական ուղիները, արդյոք 9-րդ դասարանի աշակերտները նախընտրում են կրթությունը շարունակել ավագ դպրոցներում, թե միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:
- Ուսումնասիրել՝ ինչ հիմնական չափանիշներով են առաջնորդվում սովորողները ավագ դպրոցներ ընտրելիս:
- Իրականացնել Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի և դպրոցների կողմից տրամադրված տվյալների վերլուծություն: Տվյալների վերլուծության և ճշգրիտ հաշվարկների հիման վրա ի հայտ բերել հաճախումների ամենացածր ցուցանիշները բնակչության շրջանում ու կատարել համապատասխան ուսումնասիրություն:
- իրականացնել հարցում հաճախումների վերաբերյալ և մշակել ուսումնասիրության մեթոդաբանությունը:
- Մշակել ուսումնասիրության համար անհրաժեշտ հետազոտական գործիքներ (հարցաթերթիկներ աշակերտների, տնօրենների, ուսուցիչների, ծնողների և ֆոկուս խմբերի համար.):
- Մշակված մեթոդաբանությունն ու ուսումնասիրության հետազոտական գործիքները նախապես համաձայնեցնել <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ-ի հետ;
- Իրականացնել դաշտային աշխատանքներ:
- Պատրաստել հաշվետվություններ:
- Պատրաստել վերջնական հաշվետվություն հիմնվելով արված դիտողությունների/մեկնաբանությունների վրա:

Խորհրդատվական աշխատանքները կատարվելու են փուլերով և կիրականացվեն 2016-2019թթ. ժամանակահատվածում:

Դիմող կազմակերպությունը պետք է բավարարի փորձի և որակավորման հետևյալ պայմաններին.

- Կազմակերպության ընդհանուր փորձը
  - առնվազն հինգ տարվա փորձ հետազոտության ոլորտում՝ ընդ որում կիրառած լինի ինչպես քանակական այնպես էլ՝ որակական մեթոդաբանություն
- Կազմակերպության հատուկ փորձը
  - հետազոտությունների փորձ կրթական ոլորտում

- Աշխատակազմի որակավորումը
  - որակյալ աշխատակազմ, որը պատշաճ կիրականացնի նշված գործողությունները
  - փորձառու մասնագետների խումբ, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով, որի կազմում ընդգրկված լինեն փորձառու մասնագետներ կրթության ոլորտից:

Խորհրդատվական կազմակերպությունը կգնահատվի հետևյալ կերպ.

- Կազմակերպության ընդհանուր փորձը – 30 միավոր
- Կազմակերպության հատուկ փորձը - 40 միավոր
- Աշխատակազմի որակավորումը - 30 միավոր

Կազմակերպությունը դիմումին կից պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

- պետական գրանցման վկայականի և կանոնադրության պատճենները,
- տեղեկանք կազմակերպության գործունեության ժամանակահատվածի մասին և այդ ընթացքում իրականացրած համապատասխան բնույթի աշխատանքների ցանկը՝ ներառյալ պայմանագրի առարկան (նկարագրությունը), գումարը, ժամկետները և պատվիրատու կազմակերպության անվանումը և իրավաբանական հասցեն:
- հիմնական աշխատակազմի անձնական թերթիկները (CV), որոնք պետք է պարունակեն աշխատակցի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը,

Համապատասխան փորձ ունեցող կազմակերպությունները կարող են դիմել <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ՝ ք. Երևան, Ս. Վրացյան փող. 73 հասցեով, (էլ. փոստ. cfep@arminco.com) մինչև 2016թ. սեպտեմբերի 2-ը ժամը 17:00-ն:

Դիմումի ձևը կցվում է:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ 57-56-90 (27) հեռախոսահամարով:

«Կրթական ծրագրերի կենտրոն»
ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վրացյան 73

Դիմող՝ _____

_____

_____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել

_____

_____

_____:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ _____ /_____/

«____» _____ 2016 թ.